

Universitäts- und Landesbibliothek Bonn

**Tesowt'iwn selbestrosi patmowt'ean ew M. Xorenac'wcy
alberac'**

Sargisean, Barsegh

Venetik, 1893

urn:nbn:de:hbz:5:1-9562

Gössen 3549

Gomzen 3549

ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՍԵՂԲԵԱՏՐՈՍԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ԵՒ

Մ. ԽՈՐԵՆԱՑԻՈՅ ԱՂԲԵՐԱՑ

ԳՐԵԱՑ

Հ. ԲԱՐՍԵՂ Վ. ՍԱՐԳԻՍԵԱՆ

ՅՈՒԽՏԵՆ ՄԽԻԹԱՐԱՑ




ՎԵՆԵՏԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑՆ ՊԱԶՈՐՈՒ

1893

3549



ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ



ԵՂԲԵՍՏՐՈՍԵԱՆ պատմութեան, կամ լաւ ևս **Առեղքաբանութեան** (Légende) հայերէն թարգմանութիւնն՝ որ կը գտնովի Սոլլատայ պատմազրութեան այլ և այլ ծեռագրաց մէջ, արդէ՞ի վաղուց գրաւած էր իմ ուշագրութիւնը՝ Մ. Խորենացոյ և Զենոբրայ հետ ունեցած առընչութեամբք. բայց այն օրէն ՚ի վեր երբ հայագէտն Ա. Կարրիէր յայտնեց ¹, – համեմատութեամբ, – անոր յունահետ բնագիրն՝ իբրև նորագիտ աղքակը Խորենացոյ Բ. Գրոց ԶԳ գլխոյն, աւելի ևս շահագրգիռ դարձաւ ինձ համար: Առաջին կէտով միայն, – եթէ ուրիշ շարժառիթք ևս չինէին, – արժամ էր հրատարակել զայն իբրև գործ նախնեաց, յունարենէն ունեցած առաւելութիւնները կամ թերութիւննը ցուցնելու աղագաւ: Բայց որովհետև յիշեալ մեծամուս զիտմականն՝ իր վերջին յօդուածովն ուրիշ նոր յայտնութիւն մ’ ևս ըրաւ, – յեղափոխելու չափ զօրաւոր Հայոց պատմաթօր և անոր պատմութեան ժամանակակիտին վերայ զիտմոց ² կարծիքը. երկրորդ փափաք իսկ յայտնեց հրատարակուած տեսնել զայն, իբրև նպաստաւոր իւր արտայայտած կարծեաց: Օւստի այս կրկին պատեհս ումելով մեզ յորդոր, կու գանք սիրայօժար կատարելու այս ծառայութիւնս:

Հրատարակութիւնս, – յորում նպաստակ դրած ենք ոչ միայն դմել դիմացէ դիմաց հայ և յունարէն բնագրերը՝ նշանակելով ամոնց և ուրիշ գրչագրաց տարբերութիւննը, այլ մանաւանդ քննենով Սեղմեստրոսի և Կոստանդիանոսի ստեղծաբանութեանց հնագոյն աղքիւրքն, և ցուցնել Խորենացոյ անոնցմէ միոյն աւելի՝ քան թէ Սոլլատայ թարգմանութեան հետ ունեցած աղերսը, – կարծեմ թէ, ընդհակառակն, Կարրիէրի կարծեաց աւելի աննպաստ՝ քան թէ նպաստաւոր արդիւնքներ յառաջ պիտի բերէ: Մենք այս զրութեամս դեռ ծեռք չի զարկած արդէն համոզուած էինք այս բանիս.

1. « Հանդէս ամսօրեայ » թիւ 7 օգոստ. 1892:

2. Այսպէս հայագէտն Դօկտ. Վէտուէր կը գրէր իր մէկ թղթին մէջ, թէ Կարրիէրի գիւտէն վերջ այլ ևս չկարէ ընդունել Խորենացոյ գատմութիւնն իբրև Ն դարու գործ:

տակայն և սյնպէս պիտի չանանք, — եթէ կարելի է, — խուսել որ և է առամձին ծկտումներէ. որովհետև սկզբան խնդիր մ'է այս, և ոչ թէ անձնական պայքար. մըշաբարին յայտնութիւնն է ինչպէս նորայն՝ այսպէս և իմ միակ նպատակն:

Սեղբեարոսի ատեղձարամութեամբ, — որուն հետ հակասական պարագայիք և հակասպատմական վէպերով միացած եմ նոյնպէս Կոստանդիանոսի, ամոր հօր Կոստասայ Քըրոսի և մօրը Հեղինեայ արարուածներն, — ՚ի վաղուց զբաղեցան քմնակըրք և զբաղեցուցին զընթերցուս, ոմանք Բարոնիսին և այլը Առէտ. Նապոլէնի կուսակից լինելով: Բայց յամին 1886 Աքբայն ՚Իւշէն իր մեծագործ և բազմազանձ հրատարակութեամբ¹, — յետ որոյ նախկին հրատարակութիւնը կորոյս իր նշանակութիւնը, — հմտալից և անաչառ զմնութեամբք՝ ի հիմանց ուսումնափրեց սեղբեստրոսեան ատեղձարամութիւնը, ոչ միայն շահեկան տեղեկութիւններ տալով ամոր լատին², յոյն³ և ասորերէն բնագրոց և ամոնց հրատարակութեամց վերայ, այլ ցուցնելով հնագոյն աղքերքը, նոցա կիրառութիւնը, գրութեամ մերձաւոր ժամանակը կամ ծագումը:

Հեղինակն՝ հայերէն թարգմանութեան բնաւ յիշատակութիւն զըներ. կ'երեխ թէ դեռ տեղեակ չէր ամոր գոյութեամ: Բայց վերոյիշեալ եռալեզու բնագրոց վերայ եղած իւր և նախորդ զիտնոց աշալուք քմնութեանց արդիւմքն այն եղաւ, ընդունել զատիմներէնն՝ իրրև բնագիր այլոց, հիմնեալ այն փաստերու վերայ, թէ նախ Աւոքուսուսի Վարուս թէ յունարէնի թէ ասորերէնի, — պէտք ենք ըսել թէ և՝ հայերէնի, — գրչագրերն իրարմէ շատ կը տարբերին ծնով և պարունակութեամբ. իսկ լատիմներնի գրչագրք առ հասարակ մի և նոյն ոնով և իրարու համաձայն կը ներկայացնեն զայն, բաց ՚ի մի քանի համառօսութեանց և յակատումներէ: Բ. Բաց ՚ի այն ըմդհանուր երևութէն, — ըստ կարծեաց Դիւշէնի, — կամ մասնական կրուաններ իսկ. այսիմքն է լատիմերնի Յառաջարամը՝ ծնով, լեզուական կազմակերպութեամբ և զաղափարաց արտայայտութեամբ յար և նման է այն երկու նամակաց, որք հերոնիստան Վակուսուսինեան իրրև ներածութիւն ծառայած եմ, և բանից գտութեամբ ըստը այն ժամանակի գրուածներէն գերազանց է: Գ. Լատիմ feria բառի յորմակի կամ եզակի գործածութեամ ամբաղարձութիւնն, որ յունին համար ըստ իմքեան անհասկանալի է. զի աստ կը գրուի հմէրօք որջադ, ծեստէր, տրէտ, և այլն. և ոչ թէ feria prima, secunda, tertia, etc. Դ. Ցումական եկեղեցւոյ արարողութեամ համաձայն չեմ դաշտում, հինգարաթի համդիսաւրութեամ և շաբաթ օրուան պահին ծագման մասին տուած մեկնութիւններն. և հետևարար յունի մի համար կարսորութիւն չէին կարող ունենալ, այլ հուվմէական եկեղեցւոյ և հուվմայեցւոյ մի քաջ կը յարմարիմ: Ե. Կասպի տոլիտնի, Լատերանու, կոստանդիանունեան և ուլյինեան տաճարաց, ինչպէս սրբոցն Պետրոսի և Պողոսի վկայարամաց տեղագրական տեղեկութիւններն իսկ կը ցուցնեմ, թէ հուվմայեցի մէկն, և կամ գէթ Հոռվմայ այցելու մի գրած էր զամոնք, զանց ընելով դեռ ուրիշ այնքան յիշատակարամներ, որք լատիմ վկայարամութեամց և նոյն իսկ Liber Pontificalis ին մէջ ստէպ կը յեղեղին:

1. *Liber Pontificalis*, texte, introduction et Commentaire, Paris T. 1. p. CIX-CXX.

2. Որ ծանօթ է մակագրութեամբս Վիտ Տիվերի, և կը գտնուի Միլանի ծեռագիրներէն մօտ յամի 1475 եղած չաւաքման Բ. հատորին մէջ, այսպիսի խորագրաւ: *Sanctorum sive vitæ Sanctorum Collectæ ex codicibus mss. Milan.*

3. *Surius, Vitæ Sanctorum*. — Combebis, *Illustri Christi martyrum triumphi*, Paris 1659. — Land, *Anecdota Syriaca*.

Դիւշէնիւ այս սրամիտ զիտողութիւններն՝ անտարակոյս լսու բաւականի գօրեղ փառ տեր եմ եզրակացնելու, թէ ստուգիւ լատիներէնն աւելի հիմ է քան այժմեան յոյմն, ասորին և հայն, և թէ բաղդատութեամբ անոնց բնագիր ըլլալու գէթ երևոյթն ուժի: Բայց թէ իրօք այդ կարծեցեալ լատին բնագրէն յառաջ Սեղբեստրոսի և Կոստանդին ամոնի ստեղծարանութեանց ուրիշ աւելի հիմ յոյն կամ ասորի աղքերք եղած չե՞ն արդեօք, յորոց ՚ի վերջլոյս Ն դարուն խմբագրուած ըլլայ լատիներէնն. այս է ահա մեզ հսամար մեծ նշանակութիւն ունեցող հարցն և բազմակինու համգոյցը, զոր Դիւշէնիւ հետ՝ անոր նախորդ և յետազայ զիտնականք խակ գոհացուցիչ կերպով ըլլուծեցին ցարդ: Հանգոյց մի՛ որ Սեղբեստրոսի Վարուց հետ յիմքն ծրարած է, – զգիտեմ ինչ պէս, – նաև Խորենացոյ պատմագրութեան Բ. Գրոց ԶԴ զլուսն և անոր հեղինակութեան գաղտնիքը: Սակայն լսու իս այս հարցս հաւաստի և պատմական եղելութիւն մ' է, այնպիսի դիպաց և աւանդութեանց հետ կապուած, որոց հնութիւնն անժխտելի է. և մենք պիտի ջանանք մերովսան ակներև ընծայել զայն:

Սուրբիս վարդապետ Պարունակ անցեալ տարի հրատարկած իր լուրջ յօդուածովն¹ ուզելով պաշտպանել Խորենացոյ Պատմագրութիւնն իրը ՚ի վերահաս վտանգէ, ախոյեան համդիսացաւ Կարրիէրի. և ընդունելով համդերձ գաղղիացի զիտնականքն ըրած զիւտին և անկէց համած եզրակացութեան ծամբութիւնն, այս միջոցս գտաւ ազատելու զնորենացին, ըսելով, թէ « Ոչ թէ Խորենացին այդ Սեղբեստրոսի Վարուց յոյն բնագրէն քաղած է զիւրմ, այլ թէ՝ եթէ ինքն և եթէ այդ յոյն կամ նախորդ լատին շարագրութիւնն՝ ուրիշ նախագոյն շարագրութեանէ մը քաղած են, և անտի խակ է նմանակցութեանց և ոչ – կատարեալ նմանակցութեանց – երևոյթք յիշեալ (այս ինքն է Սեղբեստրոսի Վարուց և Մ. Խորենացոյ պատմութեան Բ. Գրոց ԶԴ զլու) հաստածոց մէջ »:

Ուղիղ է և շատ բնական բանիքում վարդապետի սոյն զիտողութիւնը. բայց նա չապացուցուց, թէ որն էր արդեօք այդ հիմ շարագրութիւնը, յորում միայն կայացած էր բազմապատիկ գժուարութեան հետ՝ նոյնպէս անկէց յառաջ զալիք հետևութեան շահեկանութիւնն:

Սակայն երբ Կարրիէր՝ իր բնական համեստութեան մէջ գրուած երկրորդ յօդուածով՝ վերստին ասպարէզ եկաւ Սեղբեստրոսի Վարուց հայերէն թարգմանութեան հետ ունեցած աղերսներով, այն ատեն Պարունակնի լուութեան հետ՝ զարմանքն ևս մեծ եղաւ, թէպէտ և Մխիթարեան Հարքս արդէն ՚ի Վարուց Հայութան բառապաննն և վերջըս եղած ուրիշ հրատարակութեանց մէջ ծանուցած էին ոչ միայն յիշեալ թարգմանութեան գրյութիւնը, այլ նոյն խակ Խորենացոյ հետ ունեցած անոր աղերսը. ուստի բոլորովին ամծամօթ չէր այլոց, ինչպէս եմթագրած է Կարրիէր: Եւ այնուհետև ազգային թերթերու մէջ ումանք ցաւով սրտի, խակ այլք նորասիրութեամբ Խորենացոյ պարտութեան և Գաղղիացոյ յաղթամակի համբաւմ հնչեցուցին ամենուրեք:

Ստ. Մալիսասեան՝ Խորենացոյ նոր աղբէնը մակագրեալ իր գեղեցիկ յօդուածովն² քննելով Կարրիէրի զիւտին և ցուցմանց զօրութիւնը, կը յայտարարէ, թէ « Մ. Խորենացի շատ անգամ անողոք քննութեան բովերէ անցել է, բայց այս անգամուան պէս վտանգաւոր դրից մէջ զանուած չէր երբէք: Խնդիրն այժմ այնպէս դրուած է,

1. Տիս « Համդէս ամսօրեայ », թիւ 11, Նոյեմբ. 1892, էջ 343:

2. Տիս « Մուրթ » 1892 N. 12. էջ 1852:

որ եթէ մի ուրիշ յաջող լուծում՝ ըզգանէ, մեզ պէտք է ստիպէ ընդումել այս երկուակց մէկը. կամ՝ որ Խորենացին Ե դարի մատենագիր չէ, այլ Զ. դարու երկուորդ կիսում, մինչև իսկ Ե. դարու վերջերում ապրող մարդ. կամ Եթէ Մ. Խորենացի մէկն յիրավի ապրել է Ե. դարում՝ ուրեմն Խորենացոյ պատմութիւն կոչուած գիրքը նորա գրածը չէ, այլ մի կեղծիք է Զ. կամ Ե. դարերի »:

Մալխասեանց՝ յետ պարզելոյ իւր ըմթերցողաց առջև Կարրիէրի յօդուածոց միտքը, կը ծամուցամէ, թէ այն յաջող ճամապարհ ինքը գտած է. որով պիտի պաշտպանէ զիորենացի հակառակ Կարրիէրի, և լուծէ ամոր հզրակացութիւնքը: Այս ճամապարհս է, — յստ Մալխասեանի, — թէ Խորենացոյ Պատմ. Բ. Գրոց ԶԳ երորդ գլուխ Մովսիսի վասերական գործ չէ, այլ յետոյ ուրեմն ԺԱ. դարուն ներմուծուած է ամոր պատմութեամ մէջ:

Այս Ենթադրութեամս իբրև եզրակացուիչ և հաստատուն ապացոյց մէջ կը բերուին երեք փաստեր. Ա. Խորենացոյ Պատմ. Բ. ԶԳ գլուխ մէջ չայոց դարձիմ ՚ի քրիստոնէութիւն և ամոր անմիջապէս յարակից դիպաց յիշառակութիւն չկայ բնաւ, մինչդեռ իր ժամանակին ըրած էր զայն Մովսէս. ուրեմն յետ ժամանակաց յասաւուած է այն գլուխ անծանօթի մի ծեռքով, և ամոր տեղ փոխանակուած է Սեղբեստրուսեան ստեղծարանութիւնը, որով կազմուած է այժմու ԶԳ գլուխը: Բ. Խորենացոյ պատմ. այն պակասը պէտք է որ զետեղուած ըլլար Բ. Գրոց ԶԲ և ԶԴ. գլուխ մէջ տեղ. զի պատմութեամ կարգն իսկ զայդ կը պահանջէ: Գ. Խորենացոյ Յախիմի ծեռազրաց մէջ եղած է հաւաստեաւ այն ԶԳ. գլուխն, որ կը բովանդակէր չայոց դարձի պատմութիւնը. և այս բանս կ'ապացուցի Ասողկայ պատմութեամ 1 60—62 էջերու համեմատութեամբ, որ Խորենացոյ պատմազրութենէն քաղուած է, և ուր ՚ի միջի այլոց կը յիշովին սրբոց Հովհաննեանց գալուատն ՚ի չայս, Գր. Լուասորչի մուտն ՚ի վիրապ, ելքն և վարդապետութիւնը:

Մալխասեանի այս գիւտս իսկ բոլորովին նոր է և հանճարեղ՝ համգոյն գիւտին Կարրիէրի. բայց պէտք է յաւելու և զայս, թէ վերջնոյն հաւասար՝ յառաջնոյն կարծիքն ևս շատ և շատ դժուարութեանց կը բաղվի, և այնքան պիտի կարենայ նա վերականգնել զիորենացի, որքան Կարրիէր տապալել համարեցաւ: Եւ յերակի դիտելու ենք նախ, որ մէկ կողմէն դժուար է ընդումել, թէ այսպիսի ներմուծում մի տեղի ուժեցած ըլլայ, — առանց բացատութեամ, — Խորենացոյ պատմազրութեամ բոլոր ծեռազրաց մէջ. իսկ միւս կողմէն որ բնաւ հետք մի մնացած ըլլայ ոչ Մովսիսի գրչագիրներէն միոյն և ոչ իսկ Ասողկէն յառաջ նախնեաց գրուածոց մէջ այն հարազատ կարծուած ԶԳ. գլահն: Բ. Նոյն իսկ Խորենացոյ ԶԳ. գլխու Ա. պարբերութեամ մէջ ուղղակի Տրդատայ հեթանոս եղած ժամանակի Յշանաւոր մէկ դէպքին վերայ կը խօսուի, այն է Աշխաղարայ գտտեր Աշխէն տիկնոջ հետ ամուսնամալուն վերայ, և ոչ թէ բրիստոնեայ լինելում: Ուրեմն Եթէ այդ գլուխն յետոյ ուրեմն ներմուծուած ենթազրենք, այն ատեն նորա ներմուծողը շատ խեղճ դեր կատարած ովտի լինէր, յիշելով Տրդատէն տարիներ վերջ եղած Կոստանդիանոսի դարձը, և առանց բանաւոր պատմառի, զանց առնելով զՏրդատայն: Իսկ Եթէ Խորենացոյ ընծայենք այդ գլուխն, այն ատեն դիվինականալի կ'ըլլայ այն. վասն զի աստ Մովսիսի միայն նպատակն էր յիշեալ երկու վեհապետաց հարսանեաց զուգավիպութիւնը պատմել, և ոչ թէ Տրդա-

սայ դարձը, զոր Ագաթամզեղոս վլուի պատմած էր իր ամենում ծամօթ զործին մէջ, զոր և Խորենացին կը յիշատակէ՝ ՚ի վերջ ԶԳ. զլսում: Մովսիսի պատմազրութեամ այլ և այլ տեղեաց մէջ ըրած ազդարարութիւններէն իսկ զիտենք, թէ նա այն կէտերուն վերայ զոր Ագաթամզեղոս պատմած էր՝ ինքը լուութիւն կը պահէ. և հոն կը ճոխանաց, ուր նա լուած է. — օրինակի աղազաւ չոփախմեանց ազգարամութեամ և ուղեւ լորութեամ, ինչպէս նաև նումեայ և Մանեայ պատմութեամ, Տրդատայ գահակալութեամ տարեթուին, անոր և Գրիգորի մահուան մասին: Գ. Խորենացոյ սղաբամ զըզով միայն կարէին այնքամ բազմազան նիւթեր՝ մի քանի տողերու մէջ համառօտովի այնքամ ճարտարութեամբ:

Խոկ Յկատմամբ Ասողկայ պատմութենէն մէջ բերուած միջին հասուածն, — զոր Մալխասեամ՝ Խորենացոյ ամյայտացած զիմէն քաղրուած կը համարի, — կարէր ըստ իս կամ ուղղակի Մովսիսի ընծայուած չոփախմեանց ճառէն առնուած ըլլալ, ուր որոշակի կը յիշուին թէ՛ չոփախմեանց գալուստն ՚ի Հայո, թէ՛ Լուսատրչայ վարդապէտութիւնն և Հայոց դարձը. և կամ յԱգաթամզեղոյա: Վերջին կիտի ամհնարութիւնն և բուարկողաց պատասխանին թէ և տուած է Մալխասեամ, հաստատուելով հնգօրեայ Ա. պահի յիշատակութեամ վերայ, որով Ասողկայ այդ տեղին կը տարբերի Ագաթամզեղոսի « Վաթսում և հինգ օր » բացատրութենէն, և միայն Մովսիսի ամյայտացած զիմէն պէտք է որ ուղղակի առնուած լիմի: Սակայն դիտելով որ Ասողկայ այն տեղին զրէթէ բառ առ բառ նոյն է Զենորայ մէկ տեղույն հետ, զոր Սեղբեստրոսի վարուց հայ թարգմանիչն իսկ մէջ կը բերէ, և Հայոց Տօնապատմառներու մէջ իսկ կը յեղյեղուի. և որովհետու Զենոր Ագաթամզեղոսէն փոխ առած է իւր այդ տեղին և անոր անունն իսկ կը յիշէ, ուրեմն Խորենացոյ կորսուած զլուի մ' երազելմ՝ Կարսիկի դէմ զօրաւոր փաստ մի զկարէ լիմել: Ուր թողունք որ Ասողկայ այդ միջին հատուածին ոճն իսկ կը տարբերի առաջին և վերջին հատուածոց ոճէն, յորս զգալի է երկուստեք եղած նմանութիւնն:

Դ. Ասողկայ այս բացատրութիւնն իսկ, թէ « Եւ ՚ի Ընդէպոստաներորդ ամ » (թագաւորութեամ) ՏՐԴԱԿԱԿ, սուրբ կուսանքն չոփախմեանը և Գայիսմեանք վասն աստուածաշտութեամ հալածեալը՝ ՚ի Դիոկետիանոսէ, եկեալ՝ ՚ի Վաղարշապատ քաղաք՝ զմարտիրոսական չարչարանս ընկալան՝ ՚ի Տրդատայ արքայէ », աւելի Ագաթամզեղոյա՝ քան թէ Խորենացոյ պատմութեամ աւանդածին համածայն է. վասն զի վերջինս՝ վերոյիշեալ ճառին մէջ Տրդատայ գահակալութեամ տարեթիւը Դիոկետիանոսի գահակարութեամ յերբորդ տարին դնելով՝ կը լրէ. իսկ առ Ագաթամզեղոյ ընդհակաւակն, չոփախմեանց՝ ՚ի Վաղարշապատ գալմ և նահատակուլը՝ Գրիգորի վիրապէն ելելու տարույն մէջ կը դրուի, որ համդիպեցաւ Տրդատայ գահակալութեամ 15 երրորդ տարին, — մուտք առաջին տարույն մէջ նշանակելով:

Մալխասեամ՝ Խորենացոյ Բ. Գրոց ԶԳ զիմոյն մէջ Կոստանդիանոսի և Հեղինեայ համար ըսածը՝ չոփախմեանց ճառի մէջ աւանդածին հակասական համարելով, ամտի ևս առաջնոյն ամհարազատ ըլլալը կը ծեռնարկէ: Սակայն այդ իսկ զօրաւոր

1. Ուր կ' ըսուի. « Եւ մորա ելեալ (՚ի վիրապէն) ժողովեաց զմոսա առ ինքն, և նինգ օր թողու զնոսա անսուազ առաջի իւր կալով, լսելով զքարոզութիւն վարդապէտութեամ նորա: Այս առաջին պահիք եղամ յաւուրս սրբոյն Գրիգորի ... զոր և Առաջաւորք կոչեմք » :

կուռամ մի չէ . որովհետև ոչ չոփսիմնանց արքայազունց ըլլալէն՝ Կոստանդիանոսի աշխամակից ըլլալ կը հետևի , և ոչ իսկ Կոստանդիանոս չեղինեայ պոռմէկն ծնամելով՝ Կոստասայ կամ կայսերական որդի ըլլալէն կը դադրի . հետևաբար այն երկու գլուածոց մէջ իրական հակասութիւն չկայ ինչպէս կը կարծուի :

Հանդերձ այսու ամենայնիւ Մալխասեանի գնած միջոցը կարող է լինել եթէ ոչ վերջին , այլ անտարակոյս օրեղ մարտկոց մի զնորենացին պաշտպանողաց , թէպէտև անբաւական առ ՚ի տալ նմա յաղթանակել : Բայց մենք անհրաժեշտ հարկ մի չենք տեսներ զնորենացին անդամհատելով պաշտպանել . վասն զի Մովսիսի պատմագրութեան երկբայութեանց ենթարկուած զլուխներմ՝ եթէ ամէն անգամ իրեն ամհարազատ ՚ի բաց բառնայինք , այն ժամանակ անոր սեփական բան չպիտի մնար . և իրօք ի՞նչ մնաց Գուաշմիթի քննադատութենէն ազատ : Ուստի մենք կ'ուզենք իւր պատմական ամբողջութեամբը ճակատեցնել զնա ընդդէմ ախոյենից . այսինքն է ընդունելով անոր պատմագրութեան Բ . ԶԳ զլուխն իրեն հարազատ գործ , թէև տգէտ ընդօրինակողաց ձեռքեր ուրեք ուրեք աղաւադած ըլլան զայն : Խորենացին հայկական պատմաբանից հակայն է և հնութեանց գանձ . և եթէ տոկաց տևեց տարիներ յառաջ տև տոնեան ծանր հարուածոց , նոյնը դիւրաւ չպիտի ընկնի նաև քաջակորով նորմանի շողացուցած սայրասուր սլաքի ներքն :

Այս նպատակաւ պիտի ջանանք ցուցնել Ա . թէ Կոստանդիանոսի և Սեղբեստրոսի ստեղծաբանութիւնք՝ մինչև ցարդ կարծուածէն շատ աւելի հին են , և յարևելից առած իրենց նախկին ծագումն և ծնունդը : Բ . Թէ Ե . դարուն վերջին քառորդին հազիւ ուրեմն տարածուեցան մինչ ՚ի չոռվմ և ՚ի սփիւռս արևմտեան ազգաց : Գ . Թէպէտև այս ժամանակէս յառաջ ՚ի գործածութեան էին արևելեան և արևմտեան սահմանաց մէջ , մերթ վիպատամութեան և մերթ վկայաբանութեանց ձևով , բայց անոնցմէ ; իւրաքանչիւրն զեռ առանձին ումէր իր գոյութիւնը . իսկ Զ . դարուն սկիզբը հազիւ ուրեմն խմբագրուեցան ՚ի մի , քաջ լստինագէտ յոյմի մի ձեռքով , յորում ժամանակի նշանաւոր փոփոխութիւններ ևս կրեց , և ընդունեց իր մէջ ընդարձակ յաւելուածներ լատին եկեղեցւոյ յայնժամու արարողութեանց և կատարուած բարեկարգութեանց համաձայն : Դ . Թէ Կոմքեֆիսիոսի հրատարակած յունարէնը թէպէտև ընազիր չէ , այլ թարգմանեալ ՚ի լատինէ , սակայն ումի ինչ ինչ՝ ՚ի հնագոյն յոյն աղբերաց : Ե . Թէ հայերէնը հաւատարիմ թարգմանութիւն չէ ՚ի յունէ , այլ պարզապէս անոր հնետևողութեամբ եղած զատ խմբագրութիւն մի , և գործածած է այնպիսի աղբիւրներ՝ զորս յոյնը չէր մանենալ : Այն բազմաթիւ յաւելուածներն և յաւպատմներ , փոխարգութիւնք սամրողչական էջերու , խուռն տարբերութիւնք բանից և անուանց , զորս քննած և պիտի նշանակենք՝ ըսածնիս լիովին կը հաստատեն : Զ . Թէ Խորենացի ոչ Սեղբեստրոսի վարուց հայեցի թարգմանութիւնը կը ճանանար և ոչ իսկ կարէր անոր բանաքաղ կամ բանագոր լիմել , այլ ընդհակառակն անոր աղբերք թէ և համառօտ և մրակողմանի , բայց մէկէն աւելի էին և ընտիր : Սակայն ամոր գործածած յոյն բնագիրը , - գէթ Կոստանդիանոսի պատմութեան մասին , - իւր առջև ութեանց է նաև հայ թարգմանիքը , որում լեզում և գրիզը Մովսիսի լեզուէն շատ տարբեր և ստոր են : Է . Թէ հայերէն թարգմանութիւնն եղած է Կարբիէրին ենթադրած ժամանակէն շատ ետքը , եթէ Փիլոնի Տիրակացւոյ ևս հարկ ըլլայ ընծայել Սոկրատայ պատմութեան երկրորդ կամ նոր թարգմանութիւնը , զի այնպիսի ոներ և ասացուածներ ՚ի գործ ածուած են նոն , զորս Ժ դարէն վերջ եկող գրութեանց մէջ միայն կարելի է գտնել : Իսկ Սեղբես-

տրոսեան ստեղծաբանութեան ներմուծումը ժԱ. - ժԲ դարուց մէջ կատարուած է հաւամօրէն, և այն իսկ Սոլըատայ նոր թարգմանութեան և Յայամանուրաց մէջ միայն. իսկ հին թարգմանութիւնը, - որ կը գտնուի երուսաղեմայ ձեռազրի մի մէջ, և որոյ գոյութիւնն սոուզեցինք ժամանակաւ՝ ՚ի վանս դրկուած մի քամի թերթ ընդօրինակութեան համեմատութեամբ, - չի պարունակեր Սեղբեստրոսի Վարքը: Դիտելու ենք և այս, որ յիշեալ դարերէն յառաջ ոչ ՚ի տոհմայնոց յառաջ բերած է երբէք հաւտուածս ինչ Սեղբեստրոսի Վարքէն, ըստ հայ թարգմանութեան, այլ Միքայէլ Ասորին, - որ յիշեալ դարերէն վերջն է, - կը յիշէ զայն ասորի հեղինակէ մ'առնելով, որում անունն և ժամանակը ծանօթ են արդէն: Ը. Կարրիէրին եզրակացութիւնը հայերէն թարգմանութեան հին, այն է, է դարում եղած ըլլալն՝ պարզ ենթադրութեան մի վերայ հաստատուած են, և չկարեն լինել յամենայն դէպս իրու ապացուցեալ նշմարտութիւն մի: Այս մասին՝ մեծարոյ գլուխականն իսկ վերապահութեամբ միայն յայտնած է իր միտքը, որ յայտնի ապացոյց է անոր նշմարտափրութեամբ:

Այս ընդպարձակ ծրագրիս համաձայն պիտի ընենք մեր հրատարակութիւնը. բայց առաջարկեալ ծանր խնդրոց յաջող լուծումն տալու համար, համառօախիւ պիտի քըննենք, - ներածութեանս մէջ, - նախ Սեղբեստրոսի վարուց աղքիւթերն, ապա ջանալ մերովսամն ասպացուցանել վերցիշեալ կէտելով: Բայց նախ պարտք կը համարիմ ծանօցանել, թէ բաց ՚ի Դիտչնի մեծազանձ հրատարակութենէն, - որոյ անունն և տեղին կամինընվ ծանօցինք, - ուրիշ ծանօթ գլուխականի մի, այն է Արքունի Լ. Ֆրանցիսկոսի վոքրիկ՝ բայց հմտալից զրուածքն և նասաւ ինձ յօգնութիւն, - իմ ազնիւ բարեկամաց ծեռնտուութեամբ, - որոյ խորագիրն է. L' Omelia di Giacomo di Sarug, sul Battesimo di Costantino imperatore, tradotta ed annotata. Արդ՝ իրենց տեսակին մէջ մին քան զիսամ զերազանց այս երկու նրատարակութիւնքն՝ իրենց ամփոփ պարունակութեամբը մեծ դիւրութիւն ընծայեցին իմձ:

Սեղբեստրոսի ստեղծաբանութեան աղքիւթերը լաւ ուսումնասիրելու համար՝ եռեք դասաւորութեան կը վերածենք զայնս. Ա. Բիւզանդական կամ՝ յոն աղքիւթեր: Բ. Հատիմ կամ արևմտեան: Գ. Ասորա – հայ – արաբական:

Արդ՝ ուշի ուշով քննենք բիւզանդական հնագոյն աղքերքը, կը տեսնենք, որ նորա Սեղբեստրոսի Գուշերէն յառաջ կոստանդիանոսի արարուածներով կամ՝ պատրիարք Աւետինը սկսած են աւելի զբաղիլ. և ապա ժամանակին և զիսաց բերմամբ զանոնք իրարու հետ զուգած են: Զամենս 2 հեթանոս պատմազիրն, որ ծաղկեցաւ և զրեց հաւա-

1. Որ հրատարակուած է ՚ի չոռվմ յամին 1882, և այն քաղաքի թագաւորական Ակադեմիայի գործոց մի մասը կը կազմէ:

2. Հիմ և մոր մատեմազիրք իրարու անմիաբան կ'ընթանամ այս պատմազրիս նիշդ ժամանակակիտն որոշելու մէջ: Ոլիմպիոդորոս՝ յամի տեսում 410-425 միջոցին կը զնէ: Հիմրիկոս Վալիսիոս Սուփասայ հետևելով Սմաստոս կայսեր ժամանակից կը համարի զնա: Պրոկոպոս Դիազոքոս՝ դաստիարակ կ'ամուած իրեն. և Ռայտէրմայր՝ 431-591 կը հասցնէ զնա: Սակայն մենք երկու նշանաւոր յիշատակութեանց վերայ հիմնուած, զոր կ'ընէ մա ինքն Զոսիմոս, 410-431 ծաղկած կը համարինք զնա: Արդ՝ մա իր գրոց ՂԻ զիսում և Դ գրոց ԾԹ զիսում կ'ողբայ իր ժամանակի բիւզանդական կայսերութեան վիճակի, ըսելով, թէ բարձեալ է նիմաւուրց զորութիւնն. նահանգներէն ոմանք բարբարոսաց իշխանութեան ներքն ինկած են, և ոմանք ամայացած: Այն, այս վիճակին հասաւ արևմտեան կայսրութիւնը կամ Ռուսիոսի և Արկադիոսի մամուկ թագաւորաց ժամանակ, և կամ Փոքր Թէոդոսի, երբ Ալարիկ և Ռապազայիս մէկ կողմէն գթաց

Աօրէն, յամի Տեաւմ 410—431, իր պատմագրութեամ վեց Գրքերը, նախ Բ. Գրոց է. զիսում միջ խօսելով զՄԵծէն Կոստանդիանոսէ, կ' ըսէ, թէ նա պահանջի հնիանէն մի ծմեալ էր, և կը ձկաէր ձեռք բերել եր հօրը Կոստանդիանոսէ Վի և նոյն գրոց Թ. զիսում մէջ ծանուցանելով Կոստանդիանոս մահը և անոր իշխանութեամ թեկնածութերը, կ' ըսէ, թէ ոչ ոք անոր հարազատ որդուցմէ արժանի դատուեցաւ անոր յաջորդելու. այլ յուսով պարզեցաց ընտրեցին մեծամեծք զԿոստանդիանոս, որ ոչ էր ծմեալ ՚ի պատուալոր կմոչէ: Խակ նոյն գրոց ԻԹ. զիսում մէջ կը ծանուցանէն մեզ Կոստանդիանոսի մօր ՀԵՂՆԵԱՅ, անունն ևս, — Կոստանդիանոսի ՚ի Հոռվիմ երթալն, — ԱՐԴՈՒՆԵԱՅ կախարդաց անձնատուր ըլլալը, — ընտանի թերափմերը (Լար) իրեն սուլլը, — կիմն և որդին սպանմելը, — մաքրուելու համար քրմաց տուած խորհուրդն արհամարինելն, — Սպանիայէն ՚ի Հոռվիմ եկած ԵՔԵՊՐՈՎՅ ԱՐԴՈՒՆԵԱՅ միջոցով դառնալն ՚ի քրիստոնէութիւն և սրբովիլը, — Կապլատովիոնի մէջ տօնս ուրախութեամ կատարելն, և հուսկ հեթանոսական տաճարներ աւերելը, այլով նանդերձ:

Մէջ բերենք բնագրի այդ երեք տեղիքն ևս, ըստ լատիներէն թարգմանութեամ Բ. Գ. Նիեբուրի ¹. « Ac Diocletianus quidem annis tribus post mortuus est. Qui vero iam facti erant imperatores Constantius et Maximus Gallerius etc. Constantinus natus ex consuetudine mulieris parum honestae, et quæ non in manum imperatori Constanțio legitime convenisset, iamdudum cum animo suo imperio cogitans, etc... ad Constantium patrem proficiscendum, qui apud nationes transalpinas erat, et in Britania plerumque vivebat ». Երկրորդ տեղիմ. « Cumque contingeret, ut Constantius imperator eodem tempore de vita decederet: neminem prætoriani milites ex legitimis ipsius liberis idoneum regno iudicarunt; sed Constantinum ad hoc aptum videntes, simulque spe magnificarum largitionum erecti, Cæsar is ei dignitatem tribuerunt; cuius imagine Romæ pro more exhibita, etc... Constantino quidem ex animi sententia conatum suum succedere, qui muliere non matrona genitus esset; se vero talis imperatoris filium, neglectum iacere, paternum imperium obtinentibus aliis », etc... Երրորդն այս պէս. Postquam universum imperium ad unius Constantini potestatem rediisset... et patritis ad huc sacris utebatur, non tam honoris religio-

հրոսակներով, միւս կողմէն ալ Գայինաս յաւեր յապականութիւն դարձուցին զայթ: Անաւ տասայ ժամանակ ևս տկարացաւ, բայց այս առաջին անգամ չէր և Զոսիմոս չէր կրթար բաղդատել մախմի ժամանակաց հետ: Բ. Զոսիմոս կայսերաց պատմութիւնը կը հասցընէ ցամ 410, այսինքն է Ոմորիոսի վեցերորդ և Կրտսեր թէոլոսի երրորդ տարին, և հոն կը դադրեցնէ: Ուստի քանի որ նա ուրիշ պատման չի ցուցենք այնպիսի դադարման, մինք կարենք հզրակացնել, թէ գուցէ նոյն խակ այդ ժամանակ կտրուած ըլլայ նորա կենաց թիլը, կամ գրիչը դադրած:

Գ. Զոսիմոս Սիրիանոսի տաղից ներքողը կ' ընէ իր երկասիրութեամց մէջ. Խակ Սիրիանոս 410—431ի ժամանակ գրած է զամոնք. ուրեմն Զոսիմոսի խօսքն եթէ կենդանի Սիրիանոսի վերայ է, նա ինքն և 431ին մօտեր պէտք է որ ապրած լինի: Դ. Սոզոմէն խակ, որ մօտ յամ 439 գրեց իր պատմագրութիւնն և ընծայեց Փոքր թէոլոսի, Ա. Գրոց Ե. զիսում մէջ Զոսիմոսէն հատուած մի մէջ կը բերէ Կոստանդիանոսի մասին և անոր հերքումը կ' ընէ:

nisve causa, quam necessitatis; quo fiebat ut et *hariolis fidem haberet*, expertus vera eos *predixisse de rebus omnibus* quas feliciter gessisset, at ubi Romam venit, omnis arrogantiæ plenus, ab ipso *lare* sibi sumendum impietatis exordium putavit, etc... qumque Constantini mater *Helen*a tantam calamitatem ægro ferret animo et intolerabilem ex cæde iuvenis dolorem perciperet, quasi consulans eam *Constantinus malum majori sanavit*, etc... et præterea contemptæ sacramentorum religionis, ad *flamines accendes admissorum lustrationes poscebat*. Illis respondentibus non esse traditum lustrationis modum, qui tam fæda piacula eluere posset, *Egyptius quidem* ¹ ex *Hispania Romam delatus palatinisque mulierculis familiaris factus*, et ad *Constantini colloquium admissus, sententiam doctrinæ Christianorum habere vim abolendi quodcumque peccatum confirmavit* », etc.

Հոս աւելրդ կը համարիմք քննել, թէ ստոյգ են արդեօք Զոսիմոսի՝ Կոստանդիանոսի համար ըսածները. այլ այսչափս ակներև կը տեսմուի, թէ հեթանոս մատեմազիս աւանդածները սերտիւ կապուած են Կոստանդիանոսի հնագոյն կենսազրութեան մի հետ, որ Յակ. Սրմեցւոյն և ծանօթ էր, ինչպէս և մերոյս Խորեմացւոյ, – զորս յետոյ պիտի տեսմենք: – Դիւշէ՞ Զոսիմոսէն ծազած չի համարիր Սեղբեստրոսի ստեղծաբանութիւմը: Այս ըստ խմլի նշմարիտ է. վասն զի պատմազըլիս քով Սեղբեստրոսի ոչ անուան յիշատակութիւն կայ և ոչ խակ ամոր գործոց մամբամատեմքն համեմերծ կայսեր մկրտութեամբը: Սակայն Զոսիմոսէն մէջ բերուած տեղիքը ոչ միայն չեն մերժեր զայն, այլ մանաւանդ Կոստանդիանոսի դարձի պարագաներով կը հաստատեն խկ: Զոսիմոսի աւանդածները շատ աւելի պատմական են, քան թէ Սեղբեստրոսի կենսազրութիւնը, որ բոլորովին հակապատմական և հակաժամանակազրական վիպասանութեան կերպարանք առած՝ է քրիստոնէի մի զրի ներքն: Պերշինս հակառակ և սեղբեստրոյ, Սոկրատոյ և նմանեաց, բոլորովին՝ ի բաց թողոցած է կայսեր պատմական մկրտութեմը,՝ ի նիկոմիդիա, – Արխանոսաց դէմ տնեցած հակառակութեան համար. – Խակ Զոսիմոս, ընդհակառակն, միայն Կոստանդիանոսի նախկին դարձն և սրբուիլն ՚ի մեղաց կը յիշէ, Եգիպտացւոյ յորդորմամբ, առանց մերժելու ամոր ՚ի նիկոմիդիա կատարուած մկրտութիւնն և գրոշմ ընդունելը: Շատ աւելի նիշտ է և բանաւոր Զոսիմոս, երբ կ'աւանդէ, թէ Կոստանդիանոսի խր գործած եղերանց նամար և ՚ի խայթէ խղմին դարձաւ քրիստոնեայ, և այնու յուսաց քաւել խր բարոյական հիւանդութիւնը, քան Սեղբեստրոսի Վահակն հեղինակն, – որ ուզելով ծածկել քրիստոնեայ Կայսեր յանցանքը, երևակայեալ բորոտութիւնն հնարած է իբր ՚ի պատուհաս յԱստուծոյ: Յակ. Սրմեցին՝ ոչ միայն « զերեաց (քրիստոնէից) առաջնորդի » յիշատակութեամբ, այլ նոյն խսկ Կայսեր բորոտութեան այլարամական նկալ:

1. Զոսիմոսէն յիշուած եգիպտացին, որ Սպանիայէն ՚ի չոռվմ եկած, Կոստանդիանոսի արքութեաց մէջ մուտ զոտած և Կայսեր դարձին պատճառ եղած է, ամտարակոյս Ուկու մեծանուն եկեղեցականն է, որ նիկոմի Ա. ժողովքին մէջ նախազան ևս բազմեցաւ (տես Սոկրատ Պատմութեան Ա. զւ. լԱ): Այս բանս զեռ աւելի որոշ պիտի տեսմուի Սրմեցւոյ նառին մէջ, ուր « Առաջնորդ զերեաց կամ քրիստոնէից » կոչուած է – զատ ՚ի Սեղբեստրոսէ, – և Կայսեր դարձի պատմութեան մէջ իբրև առաջին և ամենամեծ դեր խաղացող ներկայացուած:

բազրութեամբը՝ Զոսիմոսի առանդածը կը հաստատէ: Ուրեմն այս ակն յայտնի վկայութեամց հանդէպ այլ ևս չեմք տարակուսիր եզրակացնել, թէ Զոսիմոս ենէ չենախն հեղինակ լուսաւունունուն և Սեղբեարուսի Պատրունեան, այլ անշուշու ունեցած է իր ուժոց Դ. բարուս հեղինակունիւն մի, յորու այն համաստու ուղղեկունիւնուը միայն առաջ է, որ իրեն համար պատրունիւն արձեւ ունեն, և կամ նպաստուուր են իր հեղինակուն ուժուներաւուն. և նեւ այս հեղինակունիւն արևելուն մէջ և արևելուն լուսուն գրուած էր:

Սոզոմէն՝ որ 439 ին մօտերը զրեց իր պատմագրութիւնը¹, նաև իր առաջին զրոց Բ. զիսուն մէջ կը յիշէ² զՍեղբեարոս իրքն նշանակելի եպիսկոպոս հովիմայ առ կեսարութեամբ Կոստանդիանոսի և Կրիսպեայ: Գ. և Դ. զիսուն մէջ կը պատմէ անոր Մաքսենտիոսի հետ առաջին անգամ պատերազմած ժամանակ խաչի նշանին երեւումը, - քահանայիցմէ մեկնութիւն ուզելը, - զուրք խաչը Տէրութեամ նշան, - կամ ըստ Խոր. Աւ-քան = սնբիօլօն ըմելն և յաղթութիւնը: Ե. զիսուն մէջ յառաջ կը բերէ չելլենաց վաղեմի այն զրոյցը, յորում զրեալ էր, թէ Կոստանդիանոս ապօքի նաւոր ժառանգ էր թագաւորութեամ, - իր արիւմավիցքը սպամելէթ վերջ իր յանցանքը բաւելու համար Առաջորդն պղատոնական իմաստավրին խորհուրդ հարցուց, թէ կայ արդեօք քաւութեամ միջոց մի, և երբ ժխտողական պատաժիան ըմբունեցաւ, այն ատեմ դիմեց եպիսկոպոսաց, որք խորհուրդ տուին մկրտութեամբ սրբուիլ:

Աւելորդ կը համարիմք Սոզոմէնի այս վերջին տեղին արտագրել. զի բառ առ բառ Զոսիմոսի մէջ բերուած տեղեաց հետ նոյն է, զորս համառօտելով մէջ բերիմք. այլ դիտել կու տանք միայն, թէ Սոզոմէն կամ ուղղակի Զոսիմոսէն առած է, և կամ անոր հնագոյն աղբերէն: Ցիրակի նորա այս խօսքերն իսկ ըսածնիպ կը հաստատեն. « Scio quidem gentiles (յոյն ՚Ելληνες) vulgo narrare solitos » etc. Եւ անդէն կը յաւելու. « Verum hæc mihi videntur esse conficta ab illis, qui Christianam religionem vituperare student ». Ինձ այնպէս կ' երկի այս տեղայս ամբողջութենէթ, թէ Սոզոմէն՝ Սոպատրոսի տուած խորհուրդի մասին միայն կ' ըմբղիմաբանէ Զոսիմոսի, և ոչ թէ Կոստանդիանոսի ծննդեամ համար աւանդածիմ, որ իւր զրչագիրներէն ումանց մէջ իսկ կար այնպէս, ըստ ծամօթութեամ հրատարակողաց. մանաւանդ թէ իրու աւելի հնագոյն պատմազրին, - այն է Եւսեբիոսի Յքով, - որմէ առնելով չերոնիմուն⁴ մէջ կը բերէ այսպէս. « Constantinus decimosexto imperii anno diem obiit in Britannia Eboraci, postquam filius ejus Constantinus ex concubina Helena procreatus regnum invadit: quarto autem persecutionis anno Constantinus regnare orsus ».

1. Edit. Henr. Valesii, Augustæ Taurinorum 1797.

2. Հսելով « Consulibus Crispo, et Constantino Cæsaribus, Romanæ quidem ecclesiæ Silvester Præsulatum gerebat ».

3. Եւսեբիոսի մեզի ծամօթ գործոց մէջ բնաւ չեմք զտմեր այդ տեղեկութիւնը Կոստանդիանոսի ապօքիմաւոր ծննդեամ վրայ. չերոնիմեամ Միկմութեամ հրատարակիչք ևս բան մի չիմ զորցեր, թէ իմչպէս կամ ուստի՞ առած է զայն չերոնիմոս: Շատ հաւատակամ է կարծել, թէ Կեսարացի երկոյնի պատմիչն և ժամանակագիրը Կոստանդիանոսի մահուամէթ վերջ այդպիսի բան մ' ալ կարող եղած ըլլայ զրել. այսպէս նաև ՚ի Նիկոմիդիա կատարուած ուրիշ խորհուրդ մի՛ մկրտութեամ տեղ առած:

4. Տիս ՚ի Մեկմութեամ անդ Եսեբի Հայոց Կրոնիոն.

Հիմքերորդ դարու յիշատակարան մի, այն է Կ. Պոլոց Ս. Պատրիարքութեան եկեղեցւոյ մէջ եղած միւսիոն որմնամէկարը ¹, զոր կանգնած էր արևմտեան Կայսեր (յամին 472) Ուշբեռք լուսարին Յանձնական Աշխեն, կը ներկայացնէր նաև Կոստանդնուպոլի կայսեր վաղենմի մկրտութեան արարուածն ևս այսպէս.

"Ενθ' ίνα καὶ γραφίδον ιερῶν ὑπέρ ἀντυγος αὐλῆς
ἔστιν ἵδειν μέγα θαῦμα, πολύφρονα Κωνσταντῖνον,
πῶς προφυγῶν εἰώλα, Θεημάλχον ἔσβεσε λύσσην,
καὶ Τρίαδος φάος εὔρεγ ἐν ὅδασι γυῖα καθήρας.

Դիւշէն ² առանց մերժելու անոր կոստանդիանոսի ստեղծաբանեալ մկրտութեան հետ ունեցած աղերսը, պատմական մկրտութեանն ՚ի նպաստ աւելի հաւանական եղած կը համարի այս խօսքերս, բայց մենք Բարի ³ և Ֆրոնժինզանի հետ՝ առաջին մկրտութեան իրեւ յիշեցուցիչ կը համարիմք զայն: Եւ յիրավի, վերը արտագրուած յոյն բնազրի մէջա ծանրա բացատրութիւնն երկրորդ կամ ՚ի նիկոմիովիա կատարուած մկրտութեան եթէ, վերաբերենք, կը մնայ առանց նշանակութեան. այսու զի քրիստոնեայ կայսրը իւր զարձէթ մինչև կենաց վերջը զարմանք չէ որ երլորդութեան վերայ որոշ ծանօթութիւն ունենար, մանաւանդ եթէ Նիկիֆական դաւանութիւնն ևս ՚ի նկատի առնելոք: Խակ եթէ նորա զարձիմ և առաջին մկրտութեան տանք, այնուհետեւ արդարեւ կը լինի զարմանափի, և այսպէս ալ հասկանափի է: Բ. Դիտելու ենք, որ Տրιածոս փաօս նշը բառերն այն մկրտութեան ժամանակ կատարուած անտովոր իր մի կը նշանակեն, և այս բացատրութիւնս կը գտնուի ոչ միայն Սեղբեստրոսի **Վարոց** մէջ, ուր յետ ըսելու, թէ մկրտեաց զթագաւորն Տրիածոս ծնօթաւու, ամդէն կը յարէ: Հէաւոնդէ լաւուղջան տնջ ձմետրօս փատօն ունարչան նույնագույն առաջածու է, ու այս այլ մոյն խակ Սրբնեցոյ ճատին մէջ, զոր յետոյ պիտի քմնեմք: Առ Ազաթամ զեղոսի ևս նման բացատրութիւն մի կայ, ծրդասայ մկրտութեան նկարագրութեան մէջ, յասելն: « Եւ լոյս սաստին երւեալ ՚ի նմանութիւն սեան լուսաւորին, կոյր ՚ի վերա Հուրցն »: Թէպէտև չենք կրմար ըսել, թէ Գրիգորի Կենսազրին ևս ծանօթ եղած ըլլայ Սեղբեստրոսի **Վարոց**: Խակ մէջ բերուած յոյն յիշատակարանէն, - եթէ ստուգիւ մօտ յամն 472 յօրինուած է, - կարեմք եզրակացնել, թէ անկէ շատ տարի ներ յառաջ կոստանդիանոսին՝ ՚ի Սեղբեստրոսէն մկրտուած ըլլալու կամ գրաւոր և կամ անզիր աւանդութիւն մի Յունաց մէջ ամենուն ծանօթ եղած պէտք է որ ըլլար, որուն վրայ թիմուած՝ յօրինուեցաւ ապա այն որմնաթկարմ, արծունազրութեամբ հանդերձ:

Թողլով առ այժմ է. և Ը. դարտց յունական միւս աղքաբները, - որոնք զիսովին տարբեր պարագայիցմէ և յազեցութեանց մղուած են, և մենք ժամանակին ցոյց պիտի տանք. - որոնենք թէ ի՞նչ ժամանակի և պարագայից մէջ կարէին զրուիլ, - յԱրևելս, - Կոստանդիանոսի և Սեղբեստրոսի արարուածներն, իրենց նախկին և սպարզագոյն ձևին մէջ:

Տարակոյս վկայ, թէ այսպիսի բան մի Կոստանդիանոսի և իւլի մօր Հեղինեայ կեց դանութեան ժամանակ դժուարաւ կարէին իրագործուի. Վասն զի այդ միջոցին

1. *shu* Antologia græca, ed. Jacobs T. 1. p. 8.

2. Etude sur le Lib. Pont. p. 172-173.

3. Christliche Kunstblätter, Freiburg, Febr. 1869, p. 145-151.

Հրեայք, հեթանոսք և Արիանոսք կը երկնէին, իսկ քրիստոնեայք առիթ չուժէին ստեղծաբանութիւններ յօդել ամոնց վերայ, բանի որ նւաերիոս և այլք կենդանի վկայք էին նոցա գործոց, և հաւանօրէն ստուգապատում երկերով իսկ հոչակած էին անոնց գործերը: Սակայն նշանաւոր դէաք մի, այն է Նիկոյ ժողովքին գումարումն և Կայսեր այն սրբազն գործին մասնակցիլ՝ յարմար առիթ մի կրնային համարի գէթ անոր մկրտութեան խնդիրը ծնանելու: Այն, Կոստանդիանոս թէ և ներքասապէս ջերմ քրիստոնեայ, բայց առանց մկրտութեան յերեխայից սակի էր, և չէր կրնար ըստ իմքեան հաղորդիլ ժողովականաց սրբազն արարութեանց. այլ որովհետև ժողովական հարց հաւանօրութիւնն և անոր փափաքը զայս կը պահանջնէին, – սպարզա պէս խաղաղութիւն պահելու համար. ուստի կամ անոնց կողմանէ, – զժողովուրդը չգայթակեցնելու աղազաւ, – և կամ ժողովուրդին իմքնին կարէր այնպէս հանճաւել, թէ Կայսրը՝ ի սկզբն դարձին իւրոյ մկրտուած էր՝ ի չուվմ՝ Սեղբեարոսի ծեռքով. և ժողովրդեան մէջ շրջող ընդհանուր կարծիք մի՛ կարէր առանձին այս ինչ կամ այն քրիստոնեայ մատենազգի գործեան իսկ նիւթ ըլլալ:

Իսկ անոր ապօրէն ծննդեան, – չեղինեայ և Կոստասայ արարուածով, – ինչպէս նաև գահակալութեան և դարձի պատմութիւնքը բոլորովին տարբեր ժամանակի և պարագայից բերման աւելի պէտք է որ եղած ըլլան: Երբ Կոստանդ արիոսիան, Յուլիանոս Ուրացողն և Վաղէս՝ անոր մահուանէն վերջ, այն է 337–379 իրարու յա Ծորդելով, հալածանք ևս համեցին քրիստոնէութեան դէմ, և հեթանոսք և Հրէաք մէկ կողմէն, միւս կողմէն ալ Արիանոսք զօրացան բամիւ և գործով, այնուհետև ամէն տեսակ սոսայող պատմութիւններ սկսան զրել հեթանոսութեան կործանիչ և ուղղափառութեան պաշտպան Կայսեր վրայ: Այն, Կոստանդիանոսի պէս աշխարհական և աւետարանական դիւցազնի մի ծեռքով և կարմ ժամանակի մէջ գործուած քաղաքական, կրօնական և բարոյական այն անազին յեղափութիւններն յԱրևել և յԱրևմտաս՝ չէին կրնար վրիպիլ նոյն իսկ Կոստանդիան իմաստափրաց մոքէն և զրչէն. որք միմչն այն ատեն քողարկուած եղելութիւնքը սկսան ալ արծակ համարձակ՝ ի զիր արծանացնել, որոնց ուղղափառք ալ հակառակը կը չամային հաստատել: Այսպէս ուրեմն բիւզանդական կայսերութեան, կամ լաւ ևս Արևելքի մէջ՝ յառաջ եկան առաջին քրիստոնեայ Կայսեր Պատմութեան կրկին հոսանքներ. մին Քոստանդիան և Զարդարան, իսկ միւսն հակառակ և Ամբողուսան: Այսպիսի մրցութեան մի գոյութիւնն ի Դարու կը հաստատեմ Գր. Նազիանզացին (Ճառ Ե. գլ. հ) և Թէոդորեսոս (Գ. գլ. է), որը յիշելով Յուղանոսի գործադրած չարահնար միջոցները՝ Կոստանդիանոսի արարքը Յնչելու մասին, կը յաւելուն, թէ հեթանոսաց և քրիստոնէից մէջ վիճաբանութիւններ ևս կ' արծարծէր, արզիկելով վերջիններուա մեկնարամել և ուղել առաջնոր խօսածն և գրածները: Իսկ այն երկու հակառակ կոստակ ցութեանց իրեն ճշմարիտ ներկայացուցիչներ կը հանդիսանան Ե. դարու առաջին կիսուն, – ինչպէս տեսանք, – Զոսիմոս և Սողոմէն: Առաջինը նաստատուած նոր պղատոնական դպրոցի հնագոյն գրութեան մի վրայ, ի լուռութեան դատապարտած է Կոստանդիանոսի և Հուվմէական կայսերութեան վրայ սքանչելեօք կատարուած գործերն, իրեն մեծեղեռն բռնակալ մի մկանելով զնա. իսկ Սողոմէն՝ հետևելով Եւսեբեայ՝ ամսովոր կորովով մի կը չանայ ցրել անոր և համախորից աւանդածները: Պերջնոյս "Ելլաց յոքնակի կոչմանէն կը տեսնուի, թէ Կոստանդիանոսի մասին ուրիշ շատ գրութիւններ ևս ըլլալու էին ստուգիւ, թէպէտև ժամանակը քիչ բամ հասուցած է մեզ:

Արդ՝ երբ Արևելքի մէջ քրիստոնեայ և հեթանոս մատենագիրք այսպէս կը մրցէին իրարու հետ՝ Կոստանդիանոսի վերայ, յԱրևմտսա ընդ համառակն դեռ լուրթիւն կը պահուէր: Եւ Ամբրոսիս, Խոհանոս, և Պրոսպէր Ակուխտանացի՝ Եւսեբիոսէն ուսած ները միայն կը կրկնաբանէին, թէ ըլլայ նորա ծննդեամ և թէ մկրտութեամ նկատ մամբ: Սակայն Ե զարուն վերջին քառորդին այս խորհրդաւոր լուրթիւնս կ'ընդհատի, թէպէտև անոր բուն պատճառը ոչ ոք ՚ի քննափրաց կարաց յայտնել ցարդ: Ուսանք Կոստանդիանոսի և Սեղբեստրոսի Վարչուց բացակայութեամը կ'ընծայեն այն երևոյթը. բայց այս չէ ուղիղ. զի արևմտեամ եկեղեցեաց և ժողովրդեամ մէջ խակ արդէն ՚ի վարուց պէտք է որ մտած ըլլային այդ գորուածներն:

Յամին 494 ԳԵԼԵՆԻ (Գ) պապի անուանի ընդումելի և անվնդումելի գրոց ՅԱՆ-
Է (De recipiendis et de non recipiendis libris ըստ լատին բնագրին) առաջին անգամ կու գայ ՚ի հանդէս, և այնպիսի որոշ կերպով կը խօսի Սեղբեստրոսի Վարչուց վերայ, որով վերը ըսածնիս կը հաստատուի: Գրութեանս հեղինակը կը ծանուցամէ, թէ « Item Actus beati Silvestri, Apostolicæ sedis præsulis licet ejus, qui conscripsit, nomen ignoretur, a multis tamen in urbe Roma catholice legi cognovimus et pro antiquo uso multæ hoc imitantur Ecclesiæ ».

Այս հակիրճ խօսքերէս կը հետևի Ա. թէ Սեղբեստրոսի Վարուց մուտն և գործածութիւնը նոյն իսկ չուվամյ մէջ 492 էն շատ տարիներ յառաջ եղած է. որով բազում կարող եղան ընթեռմուլ զայն: Բ. զի Վարչու սովորութեամ համեմատ շատ եկեղեցիներ անոր հետևած էին ցայն վայր. այսինքն է զայն գործ ածէին: « Multæ Ecclesiæ » բացատրութիւնն եթէ բացատրութեամը չուվամյ մասնական եկեղեցեաց համար եղած համարնեք, — զոր չեմ կարծեր, — կը հետևի, որ գէթ յամէն 470–494 պետք է որ լատին լեզուով խմբագրութիւն մի և կամ թարգմանութիւն մ'եղած ըլլար, զի յունարէնը հազիւ թէ սակաւուց ոմանց ծանօթ էր դեռ. այնու մամաւանդ որ այս ժամանակէն յառաջ, ինչպէս ըսուեցաւ, Սեղբեստրոսի Վարչուց գրաւոր յիշատակութեամ մի չեմք հանդիպիր՝ լատին ուրիշ մատենագրաց քով: Իսկ եթէ արևելեան եկեղեցեաց համար ըսուած է, այնուհետև կը հետևի, թէ 470 էն յառաջ իսկ կային յունարէն և ասորերէն լեզուով գրուած վաղեմի գործեր, որոնք ապա ժամանակաւ նիւթեր մատակարարեցին լատիներէն խմբագրութեամ մի: Այս երկու կէտերս իսկ ժամանակին պիտի ջանանք ապացուցանել. բայց այժմ այսքանս զիտելու ենք, որ լատիներէն կարծեցեալ բնագրին՝ այլ և այլ ժամանակաց և հանգամանաց մէջ մասնական գրուածներէ կազմակերպուած խմբագրութիւն մ'ըլլալը՝ նոյն իսկ անոր պարունակութեամէն քաջ կը տեսմուի:

Լիբերիոսի ² անուանեալ ԳԵԼԵՆԻ ³ (Gesta Liberii), — որք ընդումելով իրեն

1. Migne, Patrol. Lat. T. LIX, p. 173 - 174. – Duchesne. Lib. Pont. p. 255 - 257: – Այս գրուածքս ապացուցուած է, թէ Գելասիոսի հարազատ գործ չէ. բայց ընդումուած է որ 492–496 ին միջոցները գրուած է. որուն համար այսպէս կը գրէր առ իս հայրն սրբազն հմախօսութեամ դէ Ռոսսի. « Il Catalogo di libri approvati o disapprovati attribuito al papa Gelasio, se non è propriamente di quel pontefice, è comunque fatta poco dopo l'età sua. In alcuni antichi codici è attribuito al papa Ormizda ».

2. Այս պապս յամին 325 յաջորդեց Յուլիոսի, և յամին 366 վախճանեալ է:

3. Տես Constant, Epist. Romanorum Pontificum. Paris 1721, Append. p. 90. Այս գրութեամս ամհարազատութիւնն ևս ապացուցուած է Բոլլամտեամց և Դիւչէնի ձեռքով:

հնագոյն Սեղբեստրոսի **Վարչը**, կը չանան միարանել իսկ զանոնք պատմութեամ հետ, — հետևեալ խօսքերով՝ ուրիշ նոր լոյս մ' եւս կու զան ափոել ցայս վայր յայտնած մեր կարծեաց վերայ, այսպէս. « Anno regni Constanti regis nepotis Constantini Magni viri, etc. Hoc cum legisset (Liberius) ex libro antiquo, eductus a libro Silvestri episcopi Romauorum, eo quod et publice prædicaret; quia in nomine Jesu Christi, a lepra mandatum fuisse per Silvestrum Constantinum patrum Constantis; erat enim Constans non integræ Cristianus... Baptizatus autem ab Eusebio Nicomediensi, in Aquilonia villa ». Յետոյ կ'լսուի, — 'ի դիմաց Կոստանդնուայ առ Լիբերիու. Sacrilegium Liberium, qui dixit patrum meum fuisse leprosum et baptizatum a Silvestro episcopo, et mundatum... dum abiero » etc.

Լիբերիոսի **Գործոց** անձանօթ հեղինակն Կոստանդնու և Կոստանդնուանդ Կոստանդնու առ Նկատակութիւնու անձանակ իսուս յիշելով, իրարու հետ կը շփոթէ. սակայն շատ նշանաւոր եմ անոր ասսանդութեամ հետևեալ կէտերը. Ա. **Հաստիոն** գրուածքի մի որոշ յիշատակութիւնն, որ հանեալ կամ յեղեալ էր ի **Վարչոց** Սեղբեստրոսի: Բ. Կոստան է եւս թիս Նկումիդացիէն մկրտուղմ, և ոչ թէ նորա հայրը Կոստանդնուանդու: Գ. Կոստանդնուանդ Նկատեր Լիբերիոս պատվին համար ըստած խօսքերմ, որը անոր կամ պաշտօնական և կամ ոչ պաշտօնական թղթերէ առնուած ըլլալ կը թուիմ:

Այս վերջին կէտո դեռ աւելի ուշագրաւ կը դառնայ, երբ Եակերիոս պատվին **Գործութիւն**¹ (Acta, և **Փելքութիւն** Բ. 4 (355–358 իմ) ստեղծարանութիւնն ² իսկ կը միարաշիմ հաստատել: Յիրավի վերջինս (տես Lib. Pont.) այսպէս կը բարբառի. « Hic declaravit Constantium filium Constantini hereticum, et secundo rebaptizatum ab Eusebio Nicomediensi iuxta Nicomediam in Aquilone villa », etc. Արդ այս, — իթչպէս նաև սիմմաքեամ լսուած ամիարազուս գրութիւնն և գործք Բ. ժողովոյն չոռվմայ, — կարծես թէ մէկ զրչի տակ հաւաքուած գրութիւնն ամէն չանք կ'ընեն, պատմական ըմելու սեղբեստրոսի ստեղծարանութիւնը, հակառակ պատմութեամ: Բնաւ չեմք տարակուսիր, թէ անոնց հաւաքողը Զ և է դարուց պարունակին մէջ ապրող լսատին մէկն ըլլայ. սակայն այս իսկ առանց տարակուսի է, թէ յիշեալ պապերու զրաւոր և հնագոյն յիշատակարաններ եւս ունեցած է նա իւր դիմաց իրեն ատաղծ, յորոց միմ էր և Սեղբեստրոսի **Վարչոց** բնագիրն և ստոր լսատին խմբագրութիւնը, զորս յիշուած տեսանք ՚ի գործս Լիբերիոսի: Այս խմբագրութիւնն անառ է **Որդութիւն** քահանայապետին հաստածը, — զոր Դիւշէն յամին 514, իսկ Յովին. Դէ Ռոսաի 494–496 իմ գրուած կը համարիմ. — որ Գելասիոսի և Փելիքսի մէջ բերուած տեղերը գրէթէ բառ առ բառ՝ կրկնելով, կը յիշէ նաև **Ալեքսանդրէ** լեռը, ուր աքսորուած էր Սեղբեստրոս. « Hic in exilio fuit in montem Syraptim persecuzione Constantini concussus, et postmodum rediens cum gloria, baptizavit Constantimum Augustum, quem curavit Dominus per baptismum a lepra ».

« Cum legisset » բացատրութիւնն իսկ կը ցուցիէ, թէ Լիբերիոս չէր անոր հեղինակն, այլ յետազայ մէկն ՚ի Զ դարում, որ աչքի զարմող կերպով շփոթած է Կոստանդնու, Կոստանդնուանդու և Կոստան ամուանքը իրարու հետ:

1. Տես Bolland. T. III. p. 167.

2. Տես Duchesne, Etude sur le Lib. Pont. p. 183 - 191.

— ԺԵ —

Լատին այս ամհարազատ՝ բայց հնագոյն աղքերաց վրայ յաւելումք նաև Ա. Հեռանկանի ընծայուած թուղթը¹, — գրեալ առ Եպիսկոպոսի ոմմ, — Վասն կապանաց Ա. Պէտրոս (De vineulis Petri), ուր Պետրոս և Պօղոս առաքելոց երևումն ևս կը յիշովի առ Կոստանդիանոս՝ այսպէս. « Sic quoisque ad Magni Constantini imperium ventum est, qui postquam dignatione superna, per Sanctos apostolos Petrum et Paulum visitatus, et per Silvestrum Papam baptizatus est; et ex persecutore fidei defensor, et mandatum Christi custoditor assiduos factus est ».

Արդ՝ մինչև հիմայ մէջ բերուած լատին հնագոյն աղքերաց, այն է Կիրերիոսի, Գելասիոսի, Փելիքսի, Նևերիոսի, Քսեստոսի, Սիմոնաքոսի, Որմնզդէսի և այլն Քահանայաց պետաց գործերու աւանդածներն եթէ բերենք 'ի մի, կ'ունենամք Կոստանդիանոսի և Սեղբեստրոսի ստեղծաբանութեամ էական մասումքը: Ուստի կարեմք այսպէս ծեռմարկել. կամ այն է՝ թէ այս ամհարազատ գործոց աւանդածներում վերայ հիմնեալ՝ բարձրացել է Սեղբեստրոսի Վարչոց շիմուածն. կամ ընդհակառակն այս ամհարազատ Հործերու առհասարակ Սեղբեստրոսի Վարչոց քաղած են իրենց աւանդածները, և կամ ընդումել, թէ ոչ Սեղբեստրոսի Վարչոց յիշեալ գործերէն, և ոչ այն Գործերն Սեղբեստրոսի մեզ ծանօթ Վարչէն առմուած են ուղղակի. այլ թէ եղած է երկոցումց հնագոյն աղքիւր մի և կամ մէկէն աւելի աղքիւրներ, յորմէ յառաջ եկած ըլլամ երկաքանչիւրքն:

Առաջին կէտը կարելի չէ ընդումել, վասն զի յիշեալ Գործերէն գէթ ոմանց մէջ այնպիսի տեղեր կամ, որք ուղղակի Սեղբեստրոսի Վարչէն առմուած կը տեսնուիմ: Երկրորդ կէտը, — եթէ Քահանայապետական Գրքի (Liber Pontificalis) խմբագրութեամ ժամանակակէտը միայն 'ի մկատի առմումք, — ըստ իմքեամ հաւանական կ'երկի, բայց որովհետև ամուրանալի է նոյնպէս, թէ վերը յիշուած քահանայապետական ամհարազատ գրոց մեջ եղած աւանդութիւմքն իսկ հնագոյն յիշատակարանաց վերայ հաստատուած են, և չէ մարթ բացէ 'ի բաց մերժել զանոնք. ուրեմն այդ ևս մեզ ամընդումելի է: Այսպէս ուրեմն իրու սոոյզ եղելութիւմ կը մնայ ընդումել վերջին կէտը, որում նպաստաւոր են մինչև ցայս վայր յոյն և լստիմ հնագոյն աղքիւրներէն մէջ բերուած տեղիքը, որոնք թէպէտ մի և նոյն դիպաց վերայ կը խօսին, բայց քանիօն զանազանութեամբ յիրերաց և 'ի Վարչոց Սեղբեստրոսի: Իսկ ընդհակառակն բոլոր այն լստին և յոյն մատենագիրներն, որք վեցերորդ դարէն կամ Սեղբեստրոսի Վարուց երկրորդ խմբագրութենքն վերջը կու գամ 'ի համրէս, աւելի կը համաձայնին իրարու, գոզցես իմն յայտնելով, թէ ամէնքն ալ մի և նոյն խմբագրութենքն լուսաւորուած կը խօսին:

Բաց աստի՛ ուրիշ տարօրինակ երևոյթ մ՝ ալ կ' ելէ մեզ ընդ յառաջ, որ այնքան աւելի զգալի է, որքան ընդհանուր. այսինքն է, Եղարու վերջին քառորդէն սկսեալ

1. Opera S. Hieron. Paris 1643. T. IX, Epistola 35.

Այս թուղթս ոմանք 'ի գիտմոց՝ չերոնիմոսի ժամանակակցի մի գործ կը համարիս: Ֆրոնթինգանմ հաւանական չի կարծեր զայն, բայց պատճառ մ՝ ալ չի թշանակեր իւր երկբայութեամ: Սակայն նւստոքիոս, — որում հետ է թղթոյս նեղինակին աղերսը, — եթէ, որպէս կարծեմ, կեսարացի սովորուէսմ է, այսուհետև կարելի է ըսել, թէ այդ թուղթը ոչ միայն չերոնիմոսի, այլ գուցէ թէ ամէէց տարիներ իսկ յառաջ գրուած ըլլայ:

— ԺԷ —

միմչև ժք դար՝ լստիմ մատենագրաց մեծ խումբ ։ մի՝ ամբողջառ յաջորդութեամբ կը յեղյեղեմ Սեղբեստրոսի Վարչութեամբ ։ իսկ առ Յոյնս, ըմդ հակառակն, միմչև է դարուն վերջը խոր լուսութիւն կը տիրէ. Յաջ. Առաջաւ Անտիքացին միայն բացառութիւն մի կը կազմէ, յիշելով որոշակի Կոստանդիանոսի, Հեղինեայ և Հռովմայ ժողովը գեան մկրտութիւնը Սեղբեստրոսի ձեռքով։ Բայց դիտելու ենք, որ այդ հեղինակն իսկ Զ լարում վերջն է, երբ Սեղբեստրոսի Վարուց լստիմ խմբագրութիւնն արդէն կատարուած և յումարենի ևս փոխուած էր։

Արդ՝ միմչև հիմայ յոյն և լստիմ հիմ աղքերաց քմնութենէն որոշ տեսնուեցաւ և մենք չենք վարանիլ եզրակացնել, թէ Կոստանդիանոսի և Անդրեասուն առեղքաբանունեւն՝ յԱրևելից անցած են յԱրևմտարարութիւննեւաճք ։ անոյն առաջ շրջան ընելով, - գրեանի ոնց մասն մասն առաջ անցած է ։ Այս, նախ և յառաջ Բիւզանդիոնը տուաւ Հռովմայ վկոստանդիանոսեանը. իսկ Հռովմ վերադարձոյց զայն Բիւզանդիոնի Սեղբեստրոսի Վարուց նորանոր յաւելուածներով համդերձաւ։

Այսպիսի ամսովոր բայց և ամերկայելի տուրեառութեան մասին՝ հետևեալ ծանրակշիռ հարգերը բնականապէս կը ելլեն ընդ առաջ, և մենք պէտք ենք ըստ կարելոյն լուծել զամոնք։ Ա. Թէ ի՞նչ դիմաց և պարագայից բերմամբ Կոստանդիանոսի և Հեղինեայ պատմութիւնն անցաւ յՆորևուսու, և ի՞նչ պայմաններով եղան ըմբումելի։ Բ. Թէ ո՞ր ժամանակ և ի՞նչ համգամանաց ներքև միացան Սեղբեստրոսի արարուածքն ամոնց հետ և եղան Յումաց ըմբումելի։

Առ այս դիտելու ենք նախ, որ ըստ վկայութեան Եսանքիոսի 2, Կոստանդիանոսի մահուամբէն անմիջապէս յետոյ՝ Յոյնք և արևելեայք սկսան շուտով տօնել զնա, իբրև դասակից Առաքելոց։ Այս տօնս ըստ հիմ տումարին յումական եկեղեցւոյ կը կատարուէր, - զոյգ ընդ Հեղինեայ, - ՚ի 21 3 Մայիսի, այնքան մեծաշուք՝ միմչև տէրութեան ատեամբ անզամ կը փակուէին։ Ուստի այս առթիւ բնական էր որ Յումաց, այսպէս և Հայոց փայլում և հետևակ համճարմներ սրէին իրենց միտքն և գրիչը, պէսպէս ներքոնեաններով հոչակել անոր անցեալ կեամքն և կենաց արարուածները, որ իրենց և քրիստոնէութեան պարծամքն եղած էր։ Այսպէս ուրեմն ՚ի վաղ ժամանակաց միմչև ցեղ դար պէտք է որ գրուած լիմէին բազմաթիւ գրութիւններ, թէ և ժամանակը քիչ բան հասուցած է մեզ։ Նոյն իսկ մեր աղքատին մատենագրութեան մէջ կը տեսնենք այսպիսի զրուցաց այլ և այլ հետքեր։ Փ. Բուզանդացին՝ Յակ. Մծրմացւոյ արարուածով, Ագաթանգեղոս՝ Բրեշտակի երևան և թագաղութեան վէպով, այսպէս և Զեմոր, մամաւանդ Խորենացին երկից իբրև համաշխարհի տօնական սուրբ յիշատակութեամբ արծագանգեր կու տան, յաստուածուսո Կոստանդիանոսի վերայ կատարուած սքանչելեաց։ Երկրորդ եթէ Հայք և Միջազնութեան Արգարու և Տրդա-

1. Գր. Տարբանակ (Hist. Francorum) յամին 539-5395, Ա. Առեւլու (Bibl. Patrum, Paris T. III. p. 290) է. դարում։ Բերտ. Հ. դարում, Առեւլուն Ա. յամին 772-795 առ Կոստանդիուն և իրենէ գրած թղթոց մէջ (Տիւ Sacrosancta Concilia, Labbeii, Venetii, T. VIII, p. 748), - Ներակա Ա. (Տիւ Hard. p. 154) յամին 858-867, - Առեւլուն վիեննացի (Hist. Christ. De la Barre, Paris 1583, f. 496) յամին 850-875, - Յաջունակ Սարկաւագ (Տիւ Muratorii, Rerum italica Script. T. I. P. II, p. 293) յամին 872, - այսպէս յետոյ Լեռնա Բ., Վանիկանին, Հերման Լուս, Ուժու ու Ֆեռու, Ութեւնակ Վէրաբէ, և այլք յոլովք։

2. Bolland. Acta Sanct. Aug. T. III. p. 578, et Mař. T. V. p. 12-14.

3. Կենաց ագրութիւն Կոստանդիանոսի, Դ. Գիրք :

տայ առաջին քրիստոնեայ թագաւորաց և նոցա դարձի պատմութիւնը բարեպաշտութեամբ վիպասանութեամ վոլսեցին, Յոյնք կամ նոյնք չէին կրնար մնալ անտարբեր նաև Կոստանդիանոսի Յկատմամբ: Հետևաբար զուգեցին անոր վարքը՝ ժամանակակից մեծ եկեղեցակամի մի կամ սուրբ հօտապետի գործոց հետ, ինչպէս Արքարուն՝ Աղուդէի, և Տրդատայի Գր. Լուսաւորի հետ, Արիոսեանց բերանը գոցելու համար. և ովք արդեօք Սեղբեստրոսէն աւելի մեծ սրբութեամ և հեղինակութեամ համբաւ տարածած էր յԱրևելս և յԱրևմուտս. և կամ որո՞ւն պատմութիւնը աւելի քան զՍեղբեստրոս սին ծածկուած ՚ի խոր հնութեամ և զմնութեամ:

